

ՏԵՂԱԿԱՆ

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ

English edition:
European Charter of Local Self-Government
ISBN 978-92-871-6943-3

Reproduction of the texts in this publication is authorised provided that the full title of the source, namely the Council of Europe, is cited. If they are intended to be used for commercial purposes or translated into one of the non-official languages of the Council of Europe, please contact publishing@coe.int.

Cover and layout: SPDP, Council of Europe

Council of Europe Publishing
F-67075 Strasbourg Cedex
<http://book.coe.int>

ISBN 978-92-871-7543-4
© Council of Europe, December 2012
Printed at the Council of Europe

Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը

Ներածություն

Եվրոպայում Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը մի եզակի կառույց է, որը պատասխանատու է Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններում տեղական և տարածաշրջանային ժողովրդավարության վիճակի գնահատման համար: Նրա գլխավոր առաքելությունն է ամրապնդել ժողովրդավարության հիմքերը և մոնիթորինգի ենթարկել դրա զարգացումը:

1985 թ. ընդունված առաջին իրավական պարտադիր փաստաթուղթ հանդիսացող Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի իրականացումը անդամ պետությունների կողմից, գտնվում է կոնգրեսի գործունեության կենտրոնում: Խարտիան դարձել է տեղական և տարածաշրջանային իշխանությունների իրավունքների պաշտպանության հիմնական համաձայնագիրը, ինչպիսին են, օրինակ՝ ինքնավարությունից և ինքնակառավարումից օգտվելու, իրենց տեղական մարմիններն ընտրելու և իրենց սեփական իրավասությունները, վարչական կառույցները և ֆինանսական միջոցները ունենալու, կամ դատարանին

դիմելու իրավունքը՝ այլ մակարդակի միջամտությունների դեպքում:

Տեղական և տարածաշրջանային իշխանություններն ավելի ու ավելի հաճախ են դիմում Կոնգրեսին՝ արձագանքելու այն իրավիճակներին, որոնք նրանք համարում են սպառնալիք՝ իրենց գործունեության համար: Այդ իրավիճակները կարող են տարբեր լինել՝ ներառելով Խարտիայի որևէ դրույթի ուղղակի խախտման հետ կապված պնդումներ, ինչպես, օրինակ կենտրոնական իշխանությունների կողմից տեղական և տարածաշրջանային իշխանությունների հետ խորհրդակցելու բացակայությունն այնպիսի հարցում, որն անմիջականորեն առնչվում է իրենց հետ (Հոդվածներ 4.6 և 9.6), կամ տեղական իշխանությունների իրավասությունների և նրանց ֆինանսական եկամուտների միջև համամասնության բացակայությունը (Հոդված 9): Կարող են լինել նաև պնդումներ Խարտիայի ոգուն՝ անհարիր անուղղակի խախտումների մասին: Օրինակ՝ տեղական իշխանության ներկայացուցիչները կարող են հայցել Կոնգրեսից՝ վերանայելու Խարտիայի պահաջներից բխող տվյալ երկրի պարտավորությունները մունիցիպալ կազմավորումների թիվը նվազեցնելու առումով, մեկնաբանել խորհրդարանի աշխատակիցներին ընտրյալ քաղաքական պաշտոն զբաղեցնելը կանխարգելող օրենքը, քայլեր ձեռնարկել երկրի մայրաքաղաքի շրջանների խորհուրդները վերացնելու՝ խորհրդարանում քննարկվող օրենքի նախագծի փոփոխման դեմ, կամ էլ մեկնաբանել տեղական հարցերում փոքրամասնության լեզուն օգտագործելու արգելքը: Կարելի է ասել, որ Կոնգրեսի առջև դրված

հարցերը՝ Խարտիայի կիրառմանը վերաբերող նրա կարծիքն իմանալու համար, լայն ընդգրկում ունեն:

Իր մոնիթորինգային գործունեության միջոցով Կոնգրեսն ապահովում է, որպեսզի Խարտիան ճշգրտորեն կիրառվի, դրանով իսկ պաշտպանելով մեր մայրցամաքի տեղական ու տարածաշրջանային ինքնակառավարման առողջ վիճակը:

Ինչպե՞ս է կոնգրեսը մոնիթորինգի ենթարկում տեղական և տարածաշրջանային ժողովրդավարությունը

- Պարբերաբար երկիր կատարվող մոնիթորինգային այցելությունների միջոցով
- Խարտիայի առանձնահատուկ կողմերի վերահսկման միջոցով
- Տեղական և տարածաշրջանային ընտրությունների դիտարկմամբ

Իր մոնիթորինգային այցելությունների հիման վրա Կոնգրեսը նախապատրաստում է զեկույցներ և քննարկում դրանք Մոնիթորինգային կոմիտեում. անդամ պետություններին տված իր հանձնարարականների միջոցով Կոնգրեսն իր ավանդն է ներդնում Եվրոպայում տեղական և տարածաշրջանային ինքնակառավարման բարելավման գործում:

1995 թ. սկսած կազմվել են շուրջ 50 մոնիթորինգային զեկույցներ և անդամ պետությունների կողմից կատարվել

են բազմաթիվ օրենսդրական բարեփոխումներ: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար նաև հնարավոր է դարձել հանել վավերացման ժամանակ իրենց կողմից արված վերապահումները:

Մոնիտորինգային միջոցառումների կատարելագործումը

2010 թ. հունիսին, որպես Կոնգրեսի բարեփոխման մաս, Կոնգրեսի Մշտական հանձնաժողովն ընդունեց Կոնգրեսի մոնիթորինգային ընթացակարգերի կազմակերպումը կառավարող կանոններ (Resolution 307 rev (2010)).

Իր կողմից իրականացվող մոնիտորինգի որակը բարձրացնելու համար Կոնգրեսը որոշեց.

- ավելի կանոնավոր ու համակարգված մոնիթորինգ անցկացնել Խարտիան ստորագրած ու վավերացրած երկրներում (մոտ 5 տարին մեկ).
- ավելի խիստ կարգ սահմանել զեկուցողներին նշանակելիս՝ երաշխավորելու մոնիթորինգի համար պատասխանատու պատվիրակության անկողմնակալությունը.
- ավարտել գործընթացը ետմոնիթորինգային աջակցությամբ՝ հիմնվելով ազգային և տեղական ու տարածաշրջանային իշխանությունների հետ համագործակցության վրա, որպեսզի տվյալ երկրի հետ համատեղ գտնվեն պատվիրակության կողմից բարձրացված խնդիրներին համարժեք լուծումները:

Այսպիսով Կոնգրեսն իր ավանդն է ներդնում տեղական և տարածաշրջանային մակարդակում, Եվրոպայի

խորհրդի հիմնարար նպատակներում, որոնք են՝
ամրապնդել ժողովրդավարությունը և պաշտպանել
մարդու իրավունքները՝ Տեղական ինքնակառավարման
խարտիայի և դրա տեղական ինքնակառավարման
մարմինների գործերին մասնակցելու իրավունքի
վերաբերյալ լրացուցիչ արձանագրության լույսի ներքո:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ

Ստրասբուրգ, 15.X.1985թ.

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, որոնք ստորագրել են սույն խարտիան,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել միասնություն ձեռք բերելն է հանուն ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալների ու սկզբունքների պաշտպանության և իրագործման,

նկատի ունենալով, որ վարչական ոլորտում համաձայնագրերի կնքումն այդ նպատակին հասնելու միջոցներից մեկն է,

նկատի ունենալով, որ տեղական ինքնակառավարման մարմինները ցանկացած ժողովրդավարական վարչակազմի հիմնական հիմքերից մեկն են,

նկատի ունենալով, որ հանրային գործերի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների ժողովրդավարական սկզբունքներից է,

նկատի ունենալով, որ այդ իրավունքը կարող է առավել ուղղակիորեն իրականացվել հատկապես տեղական մակարդակով,

հանդգնած լինելով, որ իրական պատասխանատվությամբ օժտված տեղական ինքնակառավարման մարմինների գոյությունը կարող է ապահովել արդյունավետ և, միաժամանակ, քաղաքացուն մոտ կանգնած կառավարում,

գիտակցելով, որ եվրոպական տարբեր կրկններում տեղական ինքնակառավարման պաշտպանությունն ու ամրապնդումը կարևոր ավանդ է հանդիսանում ժողովրդավարական սկզբունքների և ապակենտրոնացված իշխանության վրա հիմնված եվրոպայի կառուցման գործում,

հաստատելով, որ դա ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների առկայություն, որոնք օժտված են ժողովրդավարական ճանապարհով ստեղծված որոշումներ կայացնելու լիազորություններ ունեցող մարմիններով, և որոնք լայն ինքնավարություն ունեն իրենց պարտավորությունների, դրանց իրականացման ձևերի և մեթոդների, դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցների առումով,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Չոդված 1

Կողմերը պարտավորվում են պահպանել հետևյալ հոդվածները այն ձևով և ծավալով, ինչպես սահմանված է սույն Խարտիայի 12-րդ հոդվածում:

Մաս I

Չոդված 2. Տեղական ինքնակառավարման սահմանադրական և իրավական հիմքերը

Տեղական ինքնակառավարման սկզբունքը ճանաչվում է ներպետական օրենսդրությամբ և, որտեղ դա հնարավոր է, երկրի Սահմանադրությամբ:

Հոդված 3. Տեղական ինքնակառավարման հասկացությունը

1 Տեղական ինքնակառավարումն նշանակում է՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունը, օրենքի շրջանակներում, կարգավորելու և կառավարելու հանրային գործերի զգալի մասը սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով:

2 Այդ իրավունքն իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից, որոնց անդամները ընտրված են ազատ, գաղտնի, ուղղակի, հավասար և համընդհանուր քվեարկության ճանապարհով և որոնք կարող են ունենալ իրենց հաշվետու գործադիր մարմինները: Այս դրույթը չի բացառում քաղաքացիների՝ ժողովների, հանրաքվեների կամ քաղաքացիների ուղղակի մասնակցության ցանկացած այլ ձևի դիմելն այնտեղ, որտեղ դա թույլատրվում է օրենքով:

Հոդված 4. Տեղական ինքնակառավարման լիազորության սահմանները

1 Տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորությունները սահմանվում են սահմանադրությամբ կամ օրենքով: Սակայն այդ դրույթը չի խանգարում, որ տեղական ինքնակառավարման մարմիններին, օրենքին համապատասխան, հատուկ նպատակներով որոշ այլ լիազորություններ տրվեն:

2 Տեղական ինքնակառավարման մարմինները, օրենքի շրջանակներում, ունեն գործողությունների լիակատար ազատություն իրականացնելու համար

իրենց նախաձեռնությունները ցանկացած հարցի հետ կապված, որը դուրս չէ իրենց իրավասություններից և վերապահված չէ իշխանության այլ մարմնի:

3 Հանրային պարտականությունները, որպես կանոն, առավելապես կատարում են քաղաքացիներին ամենից մոտ կանգնած իշխանության մարմինները: Որևէ այլ մարմնի լիազորություն ընձեռելու դեպքում պետք է հաշվի առնվեն առաջադրված խնդրի ծավալն ու բնույթը, ինչպես նաև՝ խնայողության և արդյունավետության պահանջները:

4 Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող լիազորությունները սովորաբար լիակատար և բացառիկ են: Դրանք չեն կարող վերացվել կամ սահմանափակվել իշխանության մեկ այլ՝ կենտրոնական կամ տարածաշրջանային մարմնի կողմից, բացառությամբ օրենքով սահմանված կարգի:

5 Ենտրոնական կամ տարածաշրջանային մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորությունների պատվիրակման դեպքում նրանք պետք է, հնարավորության սահմաններում, ազատություն ունենան դրանց իրականացումը հարմարեցնելու տեղական պայմաններին:

6 Տեղական ինքնակառավարման մարմինների հետ, հնարավորության դեպքում, ժամանակին և համապատասխան ձևով խորհրդակցում են նրանց ուղղակիորեն վերաբերող բոլոր հարցերի պլանավորման և որոշում կայացնելու գործընթացների շուրջ:

Հողված 5. Տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային սահմանների պահպանումը

Տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային սահմանների ցանկացած փոփոխություն չպետք է կատարվի առանց նախապես տեղական շահագրգիռ համայնքների հետ խորհրդակցելու, հնարավորության դեպքում նաև հանրաքվե անցկացնելու միջոցով, եթե դա թույլատրված է օրենքով:

Հողված 6. Համապատասխան վարչական կառուցվածքները և միջոցները տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների համար

1 Չխախտելով առավել ընդհանուր օրենսդրական դրույթները, տեղական ինքնակառավարման մարմինները պետք է կարողանան որոշել իրենց համայնքային վարչական կառուցվածքները՝ դրանք տեղական պահանջներին հարմարեցնելու և արդյունավետ կառավարում ապահովելու համար:

2 Տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների աշխատանքի ընդունվելու պայմանները պետք է հնարավորություն տան հավաքագրելու բարձր որակավորում ունեցող անձնակազմ, հիմնված փորձի և բանիմացության սկզբունքների վրա: Այդ նպատակով պետք է ապահովվեն համապատասխան հնարավորություններ վերապատրաստման, վարձատրության և ծառայողական առաջխաղացման համար:

Հոդված 7. Տեղական մակարդակում լիազորությունների իրականացման պայմանները

1 Տեղական մարմինների ընտրված ներկայացուցիչների կարգավիճակը պետք է ապահովի նրանց գործառույթների ազատ իրականացումը:

2 Դրանք պետք է թույլ տան ստանալու իրենց լիազորությունների իրականացման ժամանակ արվող ծախսերին համապատասխան դրամական փոխհատուցում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փոխհատուցում՝ չստացված վաստակի դիմաց կամ վճարում՝ կատարված աշխատանքի դիմաց և համապատասխան սոցիալական պաշտպանություն:

3 Տեղական մարմիններում ընտրված պաշտոնատար անձի կարգավիճակին անհամատեղելի գործառույթներն ու գործունեությունը պետք է սահմանվեն օրենքով կամ հիմնարար իրավական սկզբունքներով:

Հոդված 8. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վարչական վերահսկողությունը

1 Տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած վարչական վերահսկողություն կարող է իրականացվել միայն համաձայն այնպիսի ընթացակարգերի և այն դեպքերում, որոնք ամրագրված են Սահմանադրությամբ կամ օրենքով:

2 Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ցանկացած վարչական

վերահսկողություն, որպես կանոն, պետք է ծառայի միայն օրենքի և սահմանադրական սկզբունքների ապահովմանը: Այդուհանդերձ, վարչական վերահսկողությունը կարող է ներառել նաև վերադաս մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների կատարման հսկողությունը:

3 Տեղական ինքնակառավարման մարմինների վարչական վերահսկողությունը իրականացվում է այնպես, որ վերահսկող մարմնի միջամտության աստիճանը համաչափ լինի այն շահերի կարևորության աստիճանին, որոնք նա նպատակ ունի պաշտպանելու:

Հոդված 9. Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցները

1 Տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն ազգային տնտեսական քաղաքականության շրջանակներում տնօրինելու համապատասխան սեփական ֆինանսական միջոցներ, որոնք նրանք ազատորեն կարող են օգտագործել իրենց լիազորությունների շրջանակներում:

2 Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցները պետք է համաչափ լինեն սահմանադրությամբ և օրենքով նրանց տրված լիազորություններին:

3 Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցների առնվազն մի մասը գոյանում է տեղական տուրքերի և վճարումների հաշվին, որոնց դրույքաչափերը նրանք իրավունք ունեն սահմանելու օրենքի շրջանակներում:

4 Այն ֆինանսական համակարգերը, որոնց վրա հիմնված են տեղական ինքնակառավարման մարմիններին հասանելի միջոցները, պետք է բավարար չափով բազմազան և ճկուն լինեն, որպեսզի, որքանով դա գործնականում հնարավոր է, համաքայլ ընթացան ծախսերի փոփոխություններին, որոնք ծագում են իրենց խնդիրներն իրականացնելիս:

5 Ֆինանսական առումով ավելի թույլ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտպանությունը պահանջում է ֆինանսական համահարթեցման ընթացակարգերի հաստատում կամ հավասարազոր միջոցառումներ, որոնք ուղղված են տեղական մարմինների պոտենցիալ ֆինանսական աղբյուրների անհամաչափ բաշխման հետևանքների վերացմանը և նրանց ֆինանսական վերադիր ծախսերի ճշգրտմանը: Այդպիսի ընթացակարգերը կամ միջոցառումները չպետք է սահմանափակեն տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների ազատությունը, որոնք նրանք կարող են իրականացնել իրենց լիազորությունների շրջանակներում:

6 Տեղական ինքնակառավարման մարմինների հետ պատշաճ կերպով պետք է խորհրդատվություններ անցկացվեն վերաբաշխվող միջոցները նրանց հատկացնելու կարգի վերաբերյալ:

7 Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող դրամաշնորհները հնարավորին չափով չպետք է նախատեսվեն որոշակի ծրագրերի ֆինանսավորման համար: Դրամաշնորհների տրամադրումը չպետք է վնասի տեղական ինքնակառավարման մարմինների

կողմից իրենց իրավասությունների շրջանակում քաղաքականություն վարելու ազատությամբ:

8 Կապիտալ ներդրումներ ձեռք բերելու նպատակով, օրենքի շրջանակներում, տեղական ինքնակառավարման մարմիններին պետք է մատչելի լինի կապիտալի ազգային շուկան:

Հոդված 10. Տեղական ինքնակառավարման մարմինների միավորվելու իրավունքը

1 Տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն իրենց լիազորությունները իրականացնելիս համագործակցել և, օրենքի շրջանակներում, միավորվել տեղական ինքնակառավարման այլ մարմինների հետ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրների լուծման համար:

2 Տեղական ինքնակառավարման մարմինների միավորումների մեջ մտնելու իրավունքը՝ ընդհանուր շահերը պաշտպանելու և առաջ մղելու համար, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջազգային միավորման մեջ մտնելու իրավունքը պետք է ճանաչվի յուրաքանչյուր պետությունում:

3 Տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն օրենքով սահմանված պայմաններում համագործակցել այլ պետությունների համանման մարմինների հետ:

Հոդված 11. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավական պաշտպանությունը

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների ազատ իրականացման ապահովման և սահմանադրությամբ կամ ներպետական օրենսդրությամբ ամրագրված տեղական ինքնակառավարման սկզբունքների պահպանման համար պետք է ունենան դատական պաշտպանություն:

Մաս II Այլ դրույթներ

Հոդված 12. Պարտավորություններ

1 Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է հետևել Խարտիայի առաջին մասի առնվազն 20 կետերի, որոնցից առնվազն տասը պետք է ընտրված լինեն հետևյալ կետերից.

- հոդված 2
- հոդված 3, 1-ին և 2-րդ կետեր
- հոդված 4, 1-ին, 2-րդ և 4-րդ կետեր
- հոդված 5
- հոդված 7, կետ 1
- հոդված 8, կետ 2
- հոդված 9, 1-ին, 2րդ և 3-րդ կետեր
- հոդված 10, կետ 1
- հոդված 11

2 Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերը ի պահ տալու պահին յուրաքանչյուր պայմանավորվող պետություն ծանուցում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին սույն հոդվածի 1-ին

կետի դրույթներին համապատասխան ընտրված կետերի մասին:

3 Յետագայում ցանկացած կողմ կարող է ցանկացած ժամանակ ծանուցել Գլխավոր քարտուղարին, որ ինքը պարտավորվում է հետևել սույն խարտիայի այլ կետերի, որոնք նա դեռ չի ընդունել սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան: Յետագայում տրված նման պարտավորությունները դիտվում են որպես ծանուցող կողմի վավերացման, հաստատման կամ ընդունման բաղկացուցիչ մաս և ուժի մեջ են մտնում այն ամսվա առաջին օրվանից, որը հաջորդում է ծանուցումը Գլխավոր քարտուղարի ստանալուց հետո եռամսյա ժամկետին:

Հոդված 13. Տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց նկատմամբ սույն խարտիան կիրառվում է

Սույն խարտիայում պարունակվող տեղական ինքնակառավարման սկզբունքները կիրառվում են կողմի տարածքում գոյություն ունեցող բոլոր տեսակների տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Սակայն վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ տալու պահին յուրաքանչյուր կողմ կարող է նշել տեղական կամ տարածաշրջանային մարմինների այն տեսակները, որոնց նկատմամբ մտադիր է կիրառել սույն խարտիայի դրույթները կամ որոնց մտադիր է դուրս թողնել դրա կիրառման ոլորտից: Կողմը կարող է նաև եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հետագայում տրվող ծանուցման միջոցով տարածել

Խարտիայի ազդեցությունը իշխանության տեղական և տարածաշրջանային մարմինների այլ տեսակների վրա:

Հոդված 14. Տեղեկատվության տրամադրումը

Յուրաքանչյուր կողմ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին է հանձնում ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը օրենսդրական դրույթների և իր կողմից ձեռնարկված այլ միջոցառումների մասին՝ սույն Խարտիայի պայմանները կատարելու նպատակով:

Մաս III

Հոդված 15. Ստորագրումը, վավերացումը և ուժի մեջ մտնելը

1 Սույն Խարտիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2 Սույն Խարտիան ուժի մեջ է մտնում այն եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Եվրոպայի խորհրդի անդամ չորս պետություն, նախորդ կետի դրույթներին համապատասխան, իրենց համաձայնությունն են հայտնում սույն Խարտիայով պարտավորություններ ստանձնելու կապակցությամբ:

3 Ցանկացած անդամ պետության համար, որը Խարտիայով պարտավորություն ստանձնելու իր համաձայնությունը հայտնում է հետագայում, այն

ուժի մեջ է մտնում վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ հանձնելուց հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 16. Տարածքային կիրառումը

1 Ցանկացած պետություն ստորագրելիս կամ իր վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց վրա տարածվում է սույն հարտիայի գործողությունը:

2 Ցանկացած պետություն կարող է ավելի ուշ՝ ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղած հայտարարությամբ սույն հարտիայի կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի նկատմամբ: Այդ տարածքի նկատմամբ հարտիան ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրվանից, որն սկսվում է նման հայտարարությունը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվին հաջորդող եռամսյա ժամկետը լրանալուց հետո:

3 Նախորդ երկու կետերի հիման վրա արված ցանկացած հայտարարություն, որը վերաբերում է դրանում նշված այս կամ այն տարածքին, կարող է չեղյալ հայտարարվել Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որն սկսվում է նման ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվին հաջորդող վեցամսյա ժամկետը լրանալուց հետո:

Հոդված 17. Չեղյալ հայտարարումը

1 Ցանկացած կողմ կարող է սույն խարտիան չեղյալ հայտարարել խարտիային մասնակից դառնալու պահից սկսած հինգ տարի անց ցանկացած պահի: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին վեց ամիս առաջ հղվում է ծանուցագիր: Նման չեղյալ հայտարարման հետևանքով խարտիան չի կորցնում իր ուժը այլ կողմերի նկատմամբ՝ պայմանով, որ նման կողմերի թիվը երբևէ չպետք է լինի չորսից պակաս:

2 Ցանկացած կողմ կարող է նախորդ կետի դրույթների համաձայն չեղյալ հայտարարել խարտիայի առաջին մասի՝ իր կողմից ընդունված ցանկացած կետ՝ պայմանով, որ այդ կողմը պարտավորված է մնում 12-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կետերին և նրանց քանակին: Որևէ կետի չեղյալ հայտարարման դեպքում ցանկացած կողմ, որը չի պահպանի 12-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, կհամարվի որպես ամբողջ խարտիան չեղյալ հայտարարած:

Հոդված 18. Ծանուցումներ

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցում է՝

- ա) ցանկացած ստորագրման մասին,
- բ) վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին,
- գ) Հոդված 15-ի համապատասխան՝ սույն խարտիայի ուժի մեջ մտնելու օրվա մասին,

- դ) 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթների կիրառմանը վերաբերող ստացված որևէ ծանուցման մասին,
- ե) 13-րդ հոդվածի դրույթների կիրառմանը վերաբերող ստացված որևէ ծանուցման մասին,
- զ) սույն Խարտիային վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հավաստունն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Խարտիան:

Կատարված է Ստրասբուրգում 1985 թվականի հոկտեմբերի 15-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետություն:

Լրացուցիչ արձանագրություն
Տեղական ինքնակառավարման
եվրոպական խարտիայի տեղական
ինքնակառավարման մարմինների
գործերին մասնակցելու իրավունքի
վերաբերյալ

Ուտրեխտ, 16.XI.2009

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, ստորագրելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (այսուհետ՝ «խարտիա», ETS թիվ 122) Լրացուցիչ արձանագրությունը,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել միասնություն ձեռք բերելն է հանուն ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալների ու սկզբունքների պաշտպանության և իրագործման,

նկատի ունենալով, որ պետական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների ժողովրդավարական սկզբունքներից է,

նկատի ունենալով, որ զարգացումներն անդամ պետություններում ցույց են տվել այս սկզբունքի բացառիկ կարևորությունը տեղական ինքնակառավարման համար,

նկատի ունենալով, որ տեղին կլինի խարտիայում լրացուցիչ դրույթներ ավելացնել, որոնք երաշխավորում են տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքը,

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի Կոնվենցիան՝ Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին,

որն ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2008 թվականի նոյեմբերի 27-ին,

հաշվի առնելով նաև Հայտարարագիրն ու գործողությունների ծրագիրը, որն ընդունվել է Եվրոպայի խորհրդի 3-րդ գագաթաժողովում պետությունների և կառավարությունների ղեկավարների կողմից (Վարշավա, մայիսի 16-17, 2005),

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքը

1 Մասնակից պետություններն իրենց իրավասության շրջանակներում յուրաքանչյուրին ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունք:

2 Տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքը նշանակում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և պարտականությունների իրականացման ժամանակ որոշում կայացնելու կամ ներագդելու իրավունքի առկայությունը,

3 Օրենքը նախատեսում է այս իրավունքի կիրառմանը նպաստող միջոցներ: Առանց անարդար խտրականություն դրսևորելու որևէ անհատի կամ խմբի նկատմամբ, օրենքը կարող է ապահովել առանձնահատուկ միջոցների կիրառում տարբեր հանգամանքներում կամ տարբեր մարդկանց համար: Համաձայն ստորագրող կողմի սահմանադրական և/կամ

միջազգային պարտավորությունների, օրենքը կարող է, մասնավորապես, ապահովել միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են ընտրողների համար:

4.1 Յուրաքանչյուր կողմ օրենքով ճանաչում է իր քաղաքացիների իրավունքը մասնակցելու, որպես ընտրողներ կամ թեկնածուներ, խորհուրդների կամ ժողովների անդամների ընտրությանը այն տեղական ինքնակառավարման մարմիններում, որտեղ նրանք ապրում են:

4.2 Օրենքը նաև ճանաչում է իր սեփական սահմանադրական կարգի համաձայն, այլ անձանց իրավունքը մասնակցելու այդ ամենին, եթե կողմը նման որոշում է ընդունում կամ երբ այն համապատասխանում է կողմի ընդունած միջազգային իրավական պարտավորություններին:

5.1 Տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքի իրականացման հետ կապված ցանկացած ձևականություններ, պայմաններ կամ սահմանափակումներ պետք է սահմանվեն օրենքով և համատեղելի լինեն կողմի ընդունած միջազգային իրավական պարտավորությունների հետ:

5.2 Օրենքը սահմանում է այն ձևականությունները, պայմանները կամ սահմանափակումները, որոնք անհրաժեշտ են ապահովելու համար, որ մասնակցության իրավունքի գործադրումը չվտանգի բարոյական նորմերն ու թափանցիկությունը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց լիազորությունների և պարտականությունների կատարման ժամանակ:

5.3 Որևէ այլ ձևականություններ, պայմաններ կամ սահմանափակումներ, որ անհրաժեշտ կլինեն արդյունավետ քաղաքական ժողովրդավարություն իրականացնելու, ժողովրդավարական հասարակությունում հանրային անվտանգությունը ապահովելու կամ կողմի իր ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների կատարման համար:

Հոդված 2. Մասնակցելու իրավունքն ապահովող միջոցներ

1 Կողմերը ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցներ իրականացնելու համար տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքը:

2 Մասնակցելու իրավունքն իրականացնելու միջոցները ներառում են.

- i. լիազորել տեղական ինքնակառավարման մարմիններին հեշտացնել, աջակցել և օժանդակել սույն Արձանագրությունում շարադրված մասնակցելու իրավունքի իրականացմանը:
- ii. ապահովել հետևյալ միջոցների սահմանումը.
 - ա) մարդկանց ներգրավում այնպիսի ընթացակարգերում, որոնք կարող են ներառել խորհրդատվական գործընթացներ, տեղական հանրաքվեներ և կոլեկտիվ դիմումների կազմում և, որտեղ որ տեղական ինքնակառավարման մարմինների տարածքում մեծաթիվ բնակչություն կա և/կամ այն ընդարձակ աշխարհագրական

չափերի է հասնում, միջոցներ՝ ներգրավելու համար այդ պահանջներին բավականաչափ համապատասխանող մարդկանց,

բ) ընթացակարգեր, որոնք համաձայն ստորագրող կողմի սահմանադրական կարգի և միջազգային իրավական արտավորությունների, մատչելի կդարձնեն տեղական ինքնակառավարման մարմինների մոտ պահվող պաշտոնական փաստաթղթերը,

գ) միջոցներ ընդառաջելու այն խմբի մարդկանց կարիքներին, որոնք առանձնահատուկ խոչընդոտների են հանդիպում մասնակցություն ունենալու հարցում, և

դ) մեխանիզմներ և ընթացակարգեր զբաղվելու և պատասխանելու այն բողոքներին և առաջարկություններին, որոնք վերաբերում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը և տեղական հանրային ծառայություններին:

iii. քաջալերել տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործումը՝ սատարելու և իրականացնելու մասնակցություն ունենալու իրավունքը սույն Արձանագրությունում շարադրված ձևով:

3. Ընթացակարգերը, միջոցները և մեխանիզմները կարող են տարբեր տեսակի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարբեր լինել, կախված նրանց չափից և իրավասություններից:

4 Պլանավորման և որոշում կայացնելու գործընթացներում, որոնք առնչվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցելու իրավունքի արդյունավետ կիրառման միջոցների ձեռնարկմանը, տեղական ինքնակառավարման մարմինների հետ անհրաժեշտ է, հնարավորության դեպքում, ժամանակին և համապատասխան ձևով խորհրդակցել այդ մասին:

Հոդված 3. Տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց նկատմամբ սույն Արձանագրությունը կիրառվում է

Սույն Արձանագրությունը կիրառվում է այն ստորագրած կողմի տարածքում գոյություն ունեցող բոլոր տեսակների տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Սակայն վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ տալու պահին յուրաքանչյուր կողմ կարող է նշել տեղական կամ տարածաշրջանային մարմինների այն տեսակները, որոնց նկատմամբ մտադիր է կիրառել սույն Արձանագրության դրույթները կամ որոնց մտադիր է դուրս թողնել դրա կիրառման ոլորտից: Այն կարող է նաև եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հետագայում տրվող ծանուցման միջոցով տարածել սույն Արձանագրության ազդեցությունը իշխանության տեղական և տարածաշրջանային մարմինների այլ տեսակների վրա:

Հոդված 4. Տարածքային կիրառումը

1 Ցանկացած պետություն ստորագրելիս կամ իր վավերագիրը, ընդունման կամ հաստատման

փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Արձանագրությունը:

2 Ցանկացած կողմ կարող է ավելի ուշ՝ ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղած հայտարարությամբ սույն արձանագրության կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի նկատմամբ: Այդ տարածքի նկատմամբ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրվանից, որն սկսվում է նման հայտարարությունը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվին հաջորդող եռամսյա ժամկետը լրանալուց հետո:

3 Նախորդ երկու կետերի հիման վրա արված ցանկացած հայտարարություն, որը վերաբերում է դրանում նշված այս կամ այն տարածքին, կարող է չեղյալ հայտարարվել Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որն սկսվում է նման ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվին հաջորդող վեցամսյա ժամկետը լրանալուց հետո:

Հոդված 5. Ստորագրումը և ուժի մեջ մտնելը

1 Սույն Արձանագրությունը բաց է խարտիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող սույն Արձանագրությունը վավերացնել, ընդունել կամ հաստատել՝ առանց միաժամանակ կամ դրանից առաջ խարտիան վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու:

Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2 Սույն Արձանագրությունը ուժի մեջ է մտնում այն եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Եվրոպայի խորհրդի ութ պետություն, կետ 1-ի համապատասխան, իրենց համաձայնությունն են հայտնում սույն Արձանագրությամբ պարտավորություններ ստանձնելու կապակցությամբ:

3 Ցանկացած անդամ պետության համար, որն Արձանագրությամբ պարտավորություն ստանձնելու իր համաձայնությունը հայտնում է հետագայում, այն ուժի մեջ է մտնում վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ հանձնելուց հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 6. Չեղյալ հայտարարումը

1 Ցանկացած կողմ կարող է ցանկացած պահի չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը՝ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցում ուղարկելու միջոցով:

2 Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որն սկսվում է նման ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվին հաջորդող վեցամսյա ժամկետը լրանալուց հետո:

ՕՂոդված 7. Ծանուցումները

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցում է՝

- ա) ցանկացած ստորագրման մասին,
- բ) վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին,
- գ) Ղոդված 5-ի համապատասխան՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա մասին,
- դ) Ղոդված 3-ի դրույթների կիրառմանը վերաբերող ստացված որևէ ծանուցման մասին,
- ե) սույն Արձանագրությանը վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հավաստումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ուտրեխտում 2009 թվականի նոյեմբերի 16-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետություն:

Տեղական ինքնակառավարման
եվրոպական խարտիան

եվ բացատրական զեկույցը

I. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան կազմվել է Եվրոպայի խորհրդում՝ կառավարման փորձագետների կոմիտեի կողմից՝ Տարածաշրջանային և տեղական գործերի ղեկավար կոմիտեի թույլտվությամբ՝ Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների մշտական համաժողովի առաջարկած նախագծի հիման վրա: Այն որպես կոնվենցիա ստորագրության է առաջադրվել Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին 1985 թ. հոկտեմբերի 15-ին:

II. Այս հրատարակությունը պարունակում է բացատրական զեկույցի՝ կոմիտեի քննարկումների հիման վրա պատրաստված և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին ներկայացված տեքստը: Այս զեկույցը Խարտիայի տեքստի պաշտոնական մեկնաբանություն տրամադրող փաստաթուղթ չէ, թեև կարող է դյուրացնել նրա դրույթների ըմբռնումը:

III. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի տեքստը ընդօրինակված է նաև այս հրատարակության մեջ:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Ա. Խարտիայի սկզբնաղբյուրները

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան Եվրոպայի խորհրդում մի շարք նախաձեռնությունների և երկարամյա քննարկումների ավարտակետն է:

Եվրոպայում տեղական ինքնավարության պաշտպանությունն ու ամրապնդումը Եվրոպայի բոլոր երկրների կողմից ստորագրված՝ սկզբունքները մեկնաբանող փաստաթղթի միջոցով տեղական կառավարման շրջանակների վաղեմի փափագն է: Ավելին, վաղ փուլում ընդունվում էր, որ այդպիսի տեքստը նպատակ կունենա ապահովելու նրանց միավորումը, ում գործողությունները հիմնականում ուղղված են պաշտպանելու տեղական ինքնավարությունը, մասնավորապես՝ իշխանություններին:

Եվրոպայի խորհուրդը՝ որպես մարդու իրավունքների պահապան և ժողովրդավարական կառավարման սկզբունքների պաշտպան, այն ակնհայտ շրջանակն էր, որտեղ պետք է նախագծվեր և ընդունվեր նման փաստաթուղթը. մանավանդ այն պատճառով, որ դեռևս 1957թ. նա արտահայտել էր տեղական իշխանությունների կարևորության իր արժևորումը՝ նրանց համար հաստատելով եվրոպական մակարդակով ներկայացուցիչների մարմին, որն այն պահից ի

վեր դարձավ Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների մշտական համաժողովը (ԵՏՏԻԿ)¹:

Իրոք, ԵՏՏԻԿ-ն էր, որ իր 64-րդ (1968) որոշման մեջ առաջադրեց Տեղական ինքնավարության սկզբունքների հռչակագիրը և դիմեց Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին՝ այն ընդունելու: Այս նախաձեռնությունը պաշտպանվեց Խորհրդակցական հավաքի կողմից, որն իր 615-րդ (1970) հանձնարարականում Նախարարների կոմիտեին ներկայացրեց մի տեքստ, որը սերտորեն հիմնված էր ԵՏՏԻԿ-ի ներկայացրածի վրա և կազմված էր կու մարմինների կողմից համատեղ: Առաջադրված հռչակագիրը, սակայն, թերևս չափազանց լայն և ընդհանրական բնույթ ուներ՝ նրա հիման վրա որևէ վճռական գործողություն ձեռնարկելու համար:

Ուստի ԵՏՏԻԿ-ի՝ 1981թ. նոր նախաձեռնությունը հիմնված էր ավելի ճկուն մոտեցման վրա: Բայց նաև նկատի առնվեց, որ սկզբունքների սոսկ չպարտավորեցնող հռչակումը չէր կարող ըստ արժանվույն գնահատել տեղական ինքնավարության կարևորությունը կամ այն վտանգների բնույթը, որոնց նա ենթարկված է: Իրականում, պետություններին պետք է դիմել մտնելու պարտավորեցնող հանձնառությունների մեջ: Պետք է ներառվեր Ազգային սահմանադրական կարգավորումների տարբերությունները և վարչական ավանդույթները հաշվի առնելու անհրաժեշտ ճկունությունը՝ ոչ թե

1. ԵՏՏԻԿ՝ քանի որ 1994թ. հունվարի 14-ից Մշտական համաժողովը՝ որպես նրա քաղաքական նշանակության ճանաչում, վերափոխվեց Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի (ԵՏՏԻԿ)։

նոր փաստաթղթերի պահանջները նշանակալիորեն թուլացնելով, այլ կառավարություններին որոշ աստիճանի ընտրություն թույլատրելով պայմանագրի կետերի վերաբերյալ, որոնք նրանք մտադիր կլինեն հանձն առնել:

Այս մոտեցման տրամաբանական ելքը ԵՏՏԻԿ-ի 126-րդ (1981) որոշումով Նախարարների կոմիտեին դիմելն էր Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի նախագծով՝ Եվրոպական կոնվենցիայի կարգավիճակով այն ընդունելու խնդրանքով:

Նախարարների կոմիտեն որոշեց ԵՏՏԻԿ-ի առաջարկները փոխանցել Տարածաշրջանային և տեղական գործերի ղեկավար կոմիտեին (ՏՏԳԿ)՝ դրանք Տեղական կառավարման համար պատասխանատու՝ Եվրոպական նախարարների 5-րդ կոնֆերանսում (Լուզանո, 1982թ. հոկտեմբերի 5 -7) քննարկելու նպատակով: Իրենց եզրակացություններում Լուզանոյում ներկա գտնված նախարարները

«...համարում են, որ խարտիայի նախագիծը կարևոր քայլ է կատարում տեղական ինքնավարության սկզբունքների սահմանման ուղղությամբ, սակայն, նկատի առնելով որոշ նախարարների վերապահությունները պարտավորեցնող համաձայնագրի տեսքով խարտիայի անհրաժեշտության և խարտիայի բովանդակության մի շարք կողմերի վերաբերյալ,

խնդրում են Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին՝ հրահանգավորել Տարածաշրջանային և տեղական գործերի ղեկավար կոմիտեին (ՏՏԳԿ) Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների համաժողովի հետ միասին անհրաժեշտ փոփոխություններ կատարել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի նախագծում՝ նրա ձևի և բովանդակության վերաբերյալ

կոնֆերանսի ընթացքում արված դիտողությունների համաձայն, այնպես որ այն կարելի լինի նրանց ներկայացնել իրենց հաջորդ կոնֆերանսում հաստատելու համար...»

Ուստի Նախարարների կոմիտեն հրահանգավորել է ՏՏԳԿ-ին, որը դրա հիման վրա կատարել է խարտիայի նախագծի մանրակրկիտ վերանայում: Ի կատարումն Լուզանոյի կոնֆերանսի եզրակացությունների՝ ԵՏՏԻԿ-ի ներկայացուցիչները մասնակցել են քննարկումներին:

ՏՏԳԿ-ի կողմից վերանայված խարտիայի նախագծի տեքստը ի վերջո ներկայացվել է Տեղական կառավարման համար պատասխանատու՝ Եվրոպայի նախարարների 6-րդ կոնֆերանսին, որը տեղի է ունեցել Յոննոմ 1984թ. նոյեմբերի 6-8-ին: Այս տեքստը քննելուց հետո նախարարները հայտնել են իրենց միաձայն համաձայնությունը այնտեղ պարունակվող սկզբունքներին: Խարտիայի ստանալիք օրինական ձևի առնչությամբ նախարարների մեծամասնությունը արտահայտվել է հօգուտ կոնվենցիայի:

Ուստի Նախարարների կոմիտեն Խորհրդակցական համաժողովի կարծիքների և Յոննի Նախարարների կոնֆերանսի լույսի ներքո 1985թ. հունիսին ընդունեց Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան՝ կոնվենցիայի տեսքով: Ի ճանաչումն այն փաստի, որ Խարտիայի նախաձեռնությունը սկզբնապես ծագում էր Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների մշտական կոնֆերանսի կողմից, որոշվեց, որ կոնվենցիան դրվելու է ստորագրության 1985թ. հոկտեմբերի 15-ին՝ ԵՏՏԻԿ-ի 20-րդ լիագումար նստաշրջանում:

Բ. Ընդհանուր դիտողություններ

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի նպատակն է լրացնել ընդհանուր եվրոպական չափորոշիչների բացը՝ գնահատելու և ապահովելու տեղական իշխանությունների իրավունքները, որոնք առավել մոտ են քաղաքացուն, և նրան հնարավորություն տալ արդյունավետ կերպով մասնակցելու իր ամենօրյա շրջապատին վերաբերող որոշումներ ընդունելուն:

Խարտիան պարտավորեցնում է կողմերին կիրառել տեղական իշխանությունների քաղաքական, վարչական և ֆինանսական անկախությունը երաշխավորող տարրական կանոններ: Այսպիսով դա կլինի եվրոպական մակարդակով քաղաքական կամքի դրսևորում՝ տարածաշրջանային վարչարարության բոլոր մակարդակներում իրական հիմք տալու այն սկզբունքներին, որոնք հիմնադրման օրից պաշտպանում է եվրոպայի խորհուրդը, որն իր գործառույթն է համարում եվրոպայի ժողովրդավարական խղճի պահպանումը և ամենալայն իմաստով մարդու իրավունքների պաշտպանությունը: Իրապես, նա մարմնավորում է այն համոզմունքը, որ ինքնակառավարման այն աստիճանը, որից օգտվում են տեղական իշխանությունները, կարող է դիտվել որպես իսկական ժողովրդավարության փորձաքար:

Խարտիան կազմված է երեք մասից: Առաջին մասը պարունակում է հիմնական դրույթներ, որոնք շարադրում են տեղական ինքնակառավարման սկզբունքները: Այն բացատրում է տեղական ինքնակառավարման համար սահմանադրական և իրավական հիմքի անհրաժեշտությունը, սահմանում է հասկացությունը և հաստատում

է սկզբունքներ, որոնք կարգավորում են տեղական իշխանությունների իրավասությունների բնույթն ու սահմանները: Հաջորդ դրույթները վերաբերում են տեղական իշխանությունների սահմանազատումների պաշտպանությանը, երաշխավորելով, որ նրանք ինքնավարություն ունենան իրենց վարչական կառույցներում և բանիմաց աշխատակազմի հնարավորություն ու սահմանված պայմաններ՝ տեղական ընտրական գրասենյակ պահելու համար: Երկու գլխավոր դրույթներ նպատակ ունեն սահմանափակելու տեղական իշխանությունների գործունեության վրա վարչական վերահսկողությունը և երաշխավորելու, որ նրանք իրենց տրամադրության տակ ունենան համապատասխան ֆինանսական ռեսուրսներ, այն չափով, որ չթուլացվի նրանց հիմնական ինքնավարությունը: Այս մասի մնացած դրույթները վերաբերում են համագործակցելու և միություններ կազմելու՝ տեղական իշխանությունների իրավունքին և տեղական ինքնակառավարման պաշտպանությանը՝ դատական միջոցներին դիմելու իրավունքով:

Երկրորդ մասը պարունակում է բազմազան դրույթներ, որոնք վերաբերում են կողմերի ստանձնած պարտավորությունների շրջանակին: Եական սկզբունքները պաշտպանելու և տարբեր անդամ երկրների իրավական ու սահմանակարգային առանձնահատկությունները հաշվի առնելու համար անհրաժեշտ ճկունության միջև իրատեսական հավասարակշռություն պահպանելու միտումին համապատասխան՝ այն մասնավորապես թույլ է տալիս կողմերին բացառել խարտիայի որոշ դրույթներ այն թվից, որ նրանք մտադիր են ստանձնել: Սրանով այն

ներկայացնում է փոխզիջում մի կողմից՝ այն փաստի ճանաչման միջև, որ տեղական ինքնակառավարումը ազդում է ինքնին երկրի կառուցվածքի և կազմակերպման վրա, որ կառավարության հիմնական մտահոգությունն է, և մյուս կողմից՝ այն նվազագույն հիմնական սկզբունքների պահպանման նպատակի միջև, որ պետք է հարգի տեղական կառավարման ամեն մի ժողովրդավարական համակարգ: Բացի այդ, կողմերի պարտավորությունները կարող են հետագայում ավելացվել այն դեպքերում, երբ համապատասխան խոչընդոտները կվերացվեն:

Ներունակաբար խարտիայում նշված տեղական ինքնակառավարման սկզբունքները վերաբերում են յուրաքանչյուր անդամ երկրի տեղական իշխանությունների բոլոր մակարդակներին կամ տեսակներին և իսկապես նաև *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով) տերիտորիալ իշխանություններին՝ տարածաշրջանային մակարդակով: Սակայն հատուկ դեպքերում կողմերին թույլ է տրվում խարտիայի շրջանակներից բացառել իշխանության որոշ տեսակներ:

Խարտիան չի առաջադրում իր իրագործման հսկողության որևէ օրինականացված համակարգ՝ կողմերին ներկայացվող այն պահանջից դուրս, որ նրանք համապատասխան տեղեկատվություն տրամադրեն խարտիայի կատարման նպատակով ձեռնարկված օրենսդրական կամ այլ միջոցառումների մասին: Իրականում քննարկվել է Եվրոպական սոցիալական խարտիայի օրինակով վերահսկողության միջազգային համակարգ հաստատելու հարցը: Սակայն հնարավոր է համարվել չօգտագործել վերահսկողության բարդ

մեխանիզմ, հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդում ԵՏՏԻԿ-ի առկայությունը՝ Նախարարների կոմիտեի հետ ուղիղ կապով, ապահովում է համապատասխան քաղաքական հսկողություն, որ կողմերը կատարեն խարտիայի պահանջները:

Տեքստի վերջին մասը պարունակում է վերջնական դրույթներ՝ Եվրոպայի խորհրդի հովանու ներքո ընդունված համաձայնագրերում սովորաբար կիրառվող դրույթներին համապատասխան:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան տեղական ինքնավարություն սահմանելու և պահպանելու առաջին բազմակողմ իրավական փաստաթուղթն է, ժողովրդավարության սյուններից մեկը, որի պաշտպանությունն ու զարացումը Եվրոպայի խորհրդի գործառույթն է: Կարելի է հուսալ, որ սրանով նա էական ներդրում կանի Եվրոպական ընդհանուր արժեքների պաշտպանության և բարելավման մեջ:

Գ. Խարտիայի դրույթների մեկնաբանություն

Նախաբան

Նախաբանը հնարավորություն է ընձեռում ձևակերպել հիմնական նախադրյալները, որոնք ընկած են խարտիայի հիմքում:

Հիմնականում դրանք հետևյալն են.

- ինքնակառավարման կենսական ներդրումը ժողովրդավարության մեջ, արդյունավետ

վարչարարությունը և իշխանության ապակենտրոնացումը.

- Եվրոպայի կառուցման գործում տեղական իշխանությունների կարևոր դերը.
- տեղական իշխանությունների՝ ժողովրդավարորեն կառուցվելու և լայն ինքնավարությունից օգտվելու կարիքը.

Յոդված 1

Յոդված 1-ը արտահայտում է կողմերի գլխավոր պարտավորությունը՝ պահպանել Խարտիայի I մասում (Յոդվածներ 2-11) սահմանված՝ տեղական ինքնակառավարման սկզբունքները Յոդված 12-ում նախատեսված չափով.

Յոդված 2

Այս հոդվածը նախատեսում է, որ տեղական ինքնակառավարումը պետք է ամրագրվի գրավոր օրենսդրությամբ:

Հաշվի առնելով այս սկզբունքի կարևորությունը՝ ցանկալի է, որ դրան հասնեն՝ այն ներառելով պետության կազմակերպումը կարգավորող հիմնարար տեքստում, այսինքն՝ սահմանադրության մեջ: Սակայն ճանաչվել է, որ այն երկրներում, որտեղ սահմանադրության փոփոխությունը պահանջում է օրենսդիր մարմնի հատուկ մեծամասնության հավանությունը, կամ ամբողջ բնակչության հանրաքվեով արտահայտված հավանությունը, կարող է հնարավոր չլինել պարտավորեցնել, որ տեղական ինքնակառավարման սկզբունքը ամրագրվի սահմանադրությամբ: Ճանաչվել

է նաև, որ այն երկրները, որոնք չունեն գրավոր սահմանադրություն, այլ սահմանադրությունը գտնվում է տարբեր փաստաթղթերում և աղբյուրներում, կարող են հանդիպել հատուկ դժվարությունների կամ նույնիսկ անկարող կլինեն ստանձնելու այդ պարտավորությունը:

Պետք է նաև հաշվի առնել այն փաստը, որ դաշնային երկրներում տեղական կառավարումը կարող է կանոնակարգվել առավելապես դաշնակից պետությունների, քան կենտրոնական դաշնային կառավարության կողմից: Ինչ վերաբերում է դաշնային պետություններին, Խարտիան որևէ կերպ չի ազդում դաշնային պետության և դաշնակից պետությունների միջև իրավասությունների և պարտականությունների բաշխման վրա:

Յոդված 3

Այս հոդվածը սահմանում է տեղական ինքնակառավարման էական բնութագրերը, ինչպես դրանք պետք է հասկացվեն՝ ելնելով Խարտիայի նպատակներից:

Կետ 1

«Կարողություն» հասկացությունը արտահայտում է այն գաղափարը, որ որոշակի հասարակական գործեր կանոնակարգելու և կառավարելու օրինական իրավունքը պետք է ուղեկցվի դա արդյունավետ կատարելու միջոցներով: «Օրենքի շրջանակներում» կապակցության ներառումը ճանաչում է այն փաստը, որ այս իրավունքը և կարողությունը պետք է ավելի ստույգ սահմանվեն օրենսդրությամբ:

«Սեփական պատասխանատվությամբ» արտահայտությունը շեշտում է, որ տեղական իշխանությունները չպետք է սահմանափակվեն գործելով սոսկ որպես ավելի բարձր իշխանությունների գործակալներ:

Չնարավոր չէ ճշգրիտ սահմանել, թե ինչ գործեր պետք է լիազորվեն տեղական իշխանություններին՝ կանոնակարգելու և կառավարելու համար: «Տեղական գործեր», «սեփական գործեր» և նման արտահայտությունները մերժվել են որպես խիստ անորոշ և դժվար մեկնաբանելի: Անդամ երկրների ավանդույթները մեծապես տարբերվում են այն առումով, թե ինչ գործեր պետք է համարվեն տեղական իշխանությունների վերապահությամբ պատկանող: Իրականում շատ գործեր ունեն թե՛ տեղական, թե՛ համազգային առնչություն, և նրանց նկատմամբ պատասխանատվությունը կարող է տարբերվել երկրից երկիր և ըստ ժամանակի և նույնիսկ կարող է բաշխվել կառավարության տարբեր մակարդակների միջև: Տեղական իշխանությունների սահմանափակումը որոշակի գործերով, որոնք ավելի լայն առնչություն չունեն, կարող է հանգեցնել նրանց երկրորդական դերին իջեցնելու վտանգին: Սյուս կողմից՝ ընդունվել է, որ երկրները որոշ գործառույթներ, ինչպիսին ազգային պաշտպանությունն է, կուզենան վերապահել կենտրոնական կառավարությանը: Խարտիայի միտումն այն է, որ տեղական իշխանությունները պետք է ունենան պարտականությունների լայն սահման, որոնք կարելի է կատարել տեղական մակարդակով: Այդ պարտականությունների սահմանումը Յոդված 4-ի նյութն է:

Կետ 2

Ինքնակառավարման իրավունքները պետք է իրականացվեն ժողովրդավարորեն կազմավորված իշխանությունների կողմից: Այս սկզբունքը համաձայնում է այն կարևորությանը, որ Եվրոպայի խորհուրդը տալիս է կառավարման ժողովրդավարական ձևերին:

Այս իրավունքը սովորաբար հանգեցնում է ներկայացուցիչների հավաքին՝ իրենց ենթակա գործադիր մարմիններով կամ առանց դրանց, բայց նաև հաշվի է առնվում ուղղակի ժողովրդավարության հնարավորությունը, եթե այն տրամադրվում է օրենսդրությամբ:

Յոդված 4

Ինչպես բացատրվեց Յոդված 3-ի մեկնաբանության մեջ, հնարավոր չէ, ոչ էլ տեղին կլիներ փորձել սպառնիչ կերպով թվարկել այն իրավասություններն ու պարտականությունները, որոնք կարող են վերաբերել տեղական կառավարմանը ամբողջ Եվրոպայում: Այնուամենայնիվ, այս հոդվածը ուրվագծում է ընդհանուր սկզբունքները, որոնց վրա պետք է հիմնվեն տեղական իշխանությունների պարտականություններն ու նրանց լիազորությունների բնույթը:

Կետ 1

Քանի որ տեղական իշխանությունների պարտականությունների բնույթը հիմնարար է տեղական ինքնակառավարման իրական լինելու համար, թե՛ պարզության, թե՛ իրավական ճշգրտության շահերից ելնելով՝ հիմնական պարտականությունները չպետք է

նրանց հանձնարարվեն ad hoc (տվյալ դեպքի համար) հիմունքով, այլ պետք է բավարար չափով հիմնված լինեն օրենսդրության վրա: Սովորաբար պարտականությունները պետք է տրվեն սահմանադրությամբ կամ խորհրդարանական ակտով: Սակայն, չնայած այս կետում «օրենք» բառի գործածությանը, ընդունվեց, որ մի շարք երկրներում հանուն արդյունավետության ցանկալի կլիներ խորհրդարանի կողմից որոշ լիազորությունների պատվիրակումը՝ առանձնահատուկ պարտականությունների փոխանցման համար, մասնավորապես, նկատի առնելով մանրամասները կամ իրազործում պահանջող գործերը՝ որպես արդյունք եվրոպական կոմիտեի հրահանգների, պայմանով, որ խորհրդարանը պատվիրակված լիազորությունների գործադրման վրա վերապահում է վերահսկողության համապատասխան իրավասություններ: Այնուհետև, բացառություն է արվում եվրոպական համայնքի անդամ երկրների դեպքում, այնքանով, որքանով Համայնքային կանոնները (որոնք ուղղակիորեն կիրառելի են Հռոմի պայմանագրի 189 հոդվածի համաձայն) կարող են նախատեսել որևէ առանձնահատուկ միջոցի կիրառում կառավարման տվյալ մակարդակում:

Կետ 2

Ի հավելումն իշխանության հատուկ մակարդակներին օրենսդրությամբ վերապահված պարտականությունների՝ հասարակական մարմինների գործունեության համար կարող են առաջադրվել նաև այլ պահանջներ կամ հնարավորություններ: Եթե գործունեության այդ բնագավառները տեղական կիրառություն ունեն և չեն բացառվում անդամ երկրների ընդհանուր

իրավասությունից, կարևոր է տեղական իշխանությունների՝ որպես իրենց բնակչության ընդհանուր բարօրությանն աջակցելու նպատակով սեփական իրավունքով գործող քաղաքական միավորների, այն ընթացման համար, որ նրանք իրավունք ունեն իրականացնելու իրենց նախաձեռնությունները այս գործերում: Բայց ընդհանուր կանոնները, որոնց համաձայն նրանք կարող են գործել այդ դեպքերում, կարող են սահմանված լինել օրենքով: Որոշ անդամ երկրներում, սակայն, տեղական իշխանությունները պետք է ի վիճակի լինեն վկայակոչելու իրենց գործունեության՝ օրենքով սահմանված իրավասությունները: Հատուկ պարտականություններից դուրս գործողությունների լայն ազատություն կարող է տրվել տեղական իշխանություններին այնպիսի համակարգի համաձայն, ինչպես այդ հասկացվում է 4-րդ հոդվածի 2-րդ կետով:

Կետ 3

Այս կետը արտահայտում է այն ընդհանուր սկզբունքը, որ հանրային պարտականությունների իրագործումը պետք է ապակենտրոնացվի: Այս սկզբունքը սահմանվել է Եվրոպայի խորհրդի համատեքստում մի շարք դեպքերի վերաբերյալ, մասնավորապես, Տեղական կառավարման համար պատասխանատու՝ Եվրոպայի նախարարների Լիսաբոնի 1977թ. համաժողովի եզրակացություններում: Սա ենթադրում է, որ եթե առաջադրված խնդրի ծավալը կամ բնույթը չեն պահանջում դրա դիտարկումը ավելի լայն տարածքային շրջանում, կամ եթե չկան արդյունավետության կամ խնայողության ավելի կարևոր նկատառումներ, այն ընդհանրապես վստահվում է իշխանության առավել տեղական մակարդակին:

Այս դրույթը, սակայն, չի ենթադրում պահանջ՝ համակարգված կերպով ապակենտրոնացնել գործառույթները, հանձնելով դրանք այնպիսի տեղական իշխանությունների, որոնք իրենց բնույթի կամ ծավալի պատճառով կարող են իրագործել միայն սահմանափակ խնդիրներ:

Կետ 4

Այս կետն առնչվում է պարտականությունների մասնակի համընկմանը: Հստակության շահերից ելնելով և խուսափելու համար պարտականությունները անընդհատ նվազեցնելու միտումից՝ լիազորությունները պետք է լինեն լիակատար և բացառիկ: Սակայն որոշ բնագավառներում պահանջվում են իշխանության տարբեր մակարդակների փոխլրացնող գործողություններ, և կարևոր է, որ այս դեպքերում կենտրոնական կամ տարածաշրջանային իշխանությունների միջամտությունը տեղի ունենա օրենսդրական հստակ դրույթների համապատասխան:

Կետ 5

Տեղական իշխանությունների վարչական կառուցվածքները և նրանց ծանոթությունը տեղական պայմաններին կարող են դրանք դարձնել հարմար մարմիններ որոշակի գործառույթներ կատարելու համար, որոնց համար բարձրագույն պատասխանատվությունն ընկնում է վեր-տեղական իշխանությունների վրա: Սակայն որպեսզի լիազորությունների այդպիսի պատվիրակման դիմելը չափից դուրս չազդի տեղական մակարդակի անկախ իշխանության ոլորտի վրա, կարևոր է, որ վերջինիս ըստ հնարավորին թույլատրվի պատվիրակված լիազորությունները կատարելիս

հաշվի առնել տեղական հանգամանքները: Ճանաչվել է, սակայն, որ որոշ գործառույթների տեսակետից, օրինակ՝ ինքնության փաստաթղթերի գործում, միօրինակ կարգավորման անհրաժեշտությունը տեղ չի թողնում տեղական գործողությունների ազատության համար:

Կետ 6

Եթե 1-ից 5-րդ կետերը առնչվում են տեղական իշխանությունների ոլորտի գործերին, ապա 6-րդ կետը վերաբերում է թե՛ այդ իշխանությունների ոլորտն ընկնող գործերին, թե՛ այն գործերին, որոնք դուրս են նրանց շրջանակից, բայց որոնք մասնավորապես ազդում են դրանց վրա: Տեքստը նախատեսում է, որ խորհրդակցման ձևը և ժամկետները պետք է լինեն այնպիսին, որ տեղական իշխանությունները ազդեցություն գործելու իրական հնարավորություն ունենան, քանի դեռ այդ բացառիկ հանգամանքներին զիջելը չի վերացրել խորհրդակցման կարիքը, մանավանդ հրատապ դեպքերում:

Յոդված 5

Իր տարածքային սահմանազատումները փոխելու առաջարկները ակնհայտորեն հիմնարար կարևորություն ունեն տեղական իշխանության և քաղաքացիների համար, որոնց նա սպասարկում է: Չնայած շատ երկրներում իրական չի դիտվում սպասել, որ տեղական համայնքը վետոյի իրավունք ունենա այդպիսի փոփոխությունների նկատմամբ, էական է դրա նախնական քննարկումը՝ ուղղակի կամ անուղղակի: Հանրաքվեները հավանաբար համապատասխան ընթացակարգ կհանդիսանան այդպիսի փոփոխությունների համար, բայց մի շարք

երկրներում դրանց վերաբերյալ օրենսդրական հոդված չկա:

Յոդված 6

Կետ 1

Այս կետի տեքստը չի առնչվում տեղական իշխանության ընդհանուր սահմանադրությանը և նրա խորհրդին, այլ ավելի շատ վերաբերում է այն միջոցին, որով կազմակերպվում են նրա ծառայությունները: Եթե կենտրոնական կամ տարածաշրջանային օրենքները այս կազմակերպության համար կարող են նախատեսել որոշ ընդհանուր սկզբունքներ, ապա տեղական իշխանությունները պետք է կարողանան կարգավորել սեփական վարչական կառուցվածքները՝ հաշվի առնելու համար տեղական հանգամանքները և վարչական արդյունավետությունը: Կենտրոնական կամ տարածաշրջանային օրենքներում հատուկ սահմանափակող պահանջները, օրինակ՝ որոշ կոմիտեներ հիմնելու կամ որոշ վարչական պաշտոններ ստեղծելու վերաբերյալ, ընդունելի են, բայց դրանք չպետք է այնքան ընդլայնվեն, որ պարտադրվի քարացած կազմակերպական կառուցվածք:

Կետ 2

Ի հավելումն կառավարման համապատասխան կառուցվածքների՝ տեղական իշխանության օգտակարության և արդյունավետության համար կարևոր է, որ այն կարողանա հավաքագրել և պահել աշխատակազմ, որի որակավորումը կհամապատասխանի իշխանության պարտականություններին: Սա ակնհայտորեն մեծ չափով կախված է տեղական իշխանության կարողությունից՝

առաջադրելու ծառայության բավարար չափով
նպաստավոր պայմաններ:

Յոդված 7

Այս հոդվածը նպատակ ունի երաշխավորելու,
որ թե՛ ընտրված ներկայացուցիչներին իրենց
գործառույթները կատարելիս չեն խանգարի երրորդ
կողմի գործողությունները, և թե՛ մանրդեղանոց որոշ
կատեգորիաների սոսկ նյութական նկատառումները
չեն խանգարի պաշտոնի նշանակվելու: Նյութական
նկատառումները ներառում են գործառույթների
կատարման ժամանակ ծախսերի ավելացման
համապատասխան ֆինանսական փոխհատուցում
և անհրաժեշտության դեպքում՝ աշխատավարձի
կորստի փոխհատուցում և, մասնավորապես,
պարտականությունների կատարման լրիվ
աշխատաժամանակով ընտրված խորհրդականների
դեպքում վարձատրություն և համապատասխան սոցիա-
լական բարեկեցության պաշտպանություն: Այս հոդվածի
ոգով խելամիտ կլիներ նաև սպասել, որ նախատեսվի
լրիվ աշխատաժամանակով պաշտոն ստանձնածների
վերաներգրավումը նորմալ աշխատանքային կյանքի
մեջ՝ նրանց պաշտոնավարության ժամկետի ավարտին:

Կետ 3

Այս կետը նախատեսում է, որ ապառաչակավորումը
տեղական ընտրովի պաշտոնից կարող է հիմնված լինել
միայն օրինական օբյեկտիվ չափանիշների և ոչ թե ad
hoc որոշման վրա: Սովորաբար սա նշանակում է, որ
անհամատեղելիության դեպքերը պետք է ձևակերպված
լինեն օրենքով: Սակայն նկատվել են ամուր հաստատված

չգրված իրավական սկզբունքների դեպքեր, որոնք թվում է, համարժեք երաշխիքներ են տալիս:

Յոդված 8

Այս հոդվածն առնչվում է կառավարման այլ մակարդակների կողմից տեղական իշխանությունների գործունեության վերահսկմանը: Այն չի վերաբերում անհատներին տեղական իշխանությունների դեմ դատական գործողությունների հնարավորություն տալուն, ոչ էլ օմբուդսմենի կամ հետաքննական դեր ունեցող այլ պաշտոնական մարմնի նշանակմանն ու գործունեությանը: Ամենից առաջ դրույթները համապատասխանում են սովորաբար *controles de tutelle*-ի հետ կապված վերահսկողության փիլիսոփայությանը, որը երկար ժամանակ ավանդույթ է եղել մի շարք երկրներում: Այդպիսով, դրանք վերաբերում են այնպիսի սովորություններին, ինչպես գործողությունը նախապես արտոնելու պահանջներն են կամ հավաստումը, որ գործողությունները արդյունք կունենան, տեղական իշխանության որոշումները չեղյալ հայտարարելու իրավունքը, հաշվապահական ստուգումները և այլն:

Կետ 1

1-ին կետը նախատեսում է, որ պետք է լինի վերահսկողության համապատասխան օրենսդրական հիմք, և այդպիսով բացառում է վերահսկողական *ad hoc* ընթացակարգերը:

Կետ 2

Վարչական վերահսկողությունը որպես կանոն պետք է սահմանափակել տեղական իշխանության

գործունեության օրինականության և ոչ թե նրա արդյունավետության հարցով: Առանձնահատուկ բայց ոչ միակ բացառություն է արվում պատվիրակված անելիքների դեպքում, երբ իր լիազորությունները պատվիրակող իշխանությունը կուզենա որոշ չափով վերահսկել դրա կատարման եղանակը: Սակայն սա չպետք է հանգեցնի տեղական իշխանության՝ որոշակի չափով ազատ գործունեության խանգարմանը, ինչպես նախատեսված է 4-րդ հոդվածի 5-րդ կետով:

Կետ 3

Տեքստի ոգին բխում է «համաչափության» սկզբունքից, որի համաձայն վերահսկող իշխանությունը իր արտոնությունները իրագործելիս պարտավոր է կիրառել այն մեթոդը, որը նվազագույն չափով է ազդում տեղական ինքնավարության վրա, մինչդեռ միաժամանակ հասնում է ցանկալի արդյունքի:

Քանի որ վերահսկողության և ստուգման ոչ տեղին կիրառման դեմ ձեռնարկված իրավական միջոցների մատչելիությունը ներառված է 11-րդ հոդվածում, հատուկ դեպքերում միջամտության պայմանների և ձևի վերաբերյալ ճշգրիտ դրույթները էական չեն համարվել:

Յոդված 9

Անհմաստ է, որ օրինական իշխանությունը կատարի որոշակի գործառույթներ, եթե տեղական իշխանությունները զրկված են դրանք իրականացնելու ֆինանսական ռեսուրսներից:

Կետ 1

Այս կետը ձգտում է երաշխավորել, որ տեղական իշխանությունները չպետք է զրկված լինեն ծախսերի առաջնահերթությունները սահմանելու իրենց ազատությունից:

Կետ 2

Խնդրո առարկա սկզբունքն այն է, որ համարժեք հարաբերություն պետք է լինի տեղական իշխանությանը հասանելի ֆինանսական ռեսուրսների և նրա կատարած առաջադրանքների միջև: Այս հարաբերությունը առանձնապես խիստ է այն գործառույթների համար, որոնք հատուկ կերպով վերապահված են նրան:

Կետ 3

Տեղական հարկատուին կամ օգտագործողին ծախսերի դեմ տրվող ծառայությունների օգուտը չափելիս՝ քաղաքական ընտրության կատարումը տեղական ընտրված ներկայացուցիչների հիմնական պարտքն է: Ընդունվել է, որ կենտրոնական կամ տարածաշրջանային օրենքները կարող են միջին սահմաններ դնել տեղական իշխանությունների հարկման իրավունքների վրա. բայց դրանք չպետք է խանգարեն տեղական հաշվետվության գործընթացի արդյունավետ գործառույթանը:

Կետ 4

Տեղական իշխանության հատուկ հարկերը կամ ֆինանսավորման աղբյուրները՝ իրենց բնույթով կամ գործնական պատճառներով համեմատաբար անզգայուն են արժեզրկման կամ տնտեսական այլ գործոնների նկատմամբ: Այդ հարկերին կամ

աղբյուրներին ավելորդ վստահությունը կարող է տեղական իշխանություններին դժվարությունների առաջ կանգնեցնել, քանի որ ծառայությունների մատուցման ծախսերը ուղղակիորեն ազդվում են տնտեսական գործոնների փոփոխություններից: Այդուհանդերձ ճանաչվել է, որ նույնիսկ եկամտի համեմատաբար շարժուն աղբյուրների դեպքում կարող է ինքնաբերական կապ չլինել ծախսերի և աղբյուրների շարժման միջև:

Կետ 6

Երբ վերաբաշխվող ռեսուրսները հատկացվում են օրենսդրությամբ սահմանված հատուկ չափանիշների համաձայն, այս կետի դրույթները կբավարարվեն, եթե տեղական իշխանությունների հետ խորհրդակցում են համապատասխան օրենսդրությունը պատրաստելիս:

Կետ 7

Տեղական իշխանության ազատ գործելու տեսակետից ամբողջական կամ նույնիսկ բաժնեմասային դրամաշնորհները (դոտացիաները) գերադասելի են հատուկ ծրագրերի համար նախանշված դոտացիաներից: Անհրատեսական կլիներ սպասել, որ հատուկ ծրագրերի բոլոր դոտացիաները փոխարինվեն ընդհանուր դոտացիաներով, մասնավորապես կապիտալ մեծ ներդրումների համար, բայց չափից ավելի դիմելը հատուկ դոտացիաներին խիստ կսահմանափակեր տեղական իշխանության ազատությունը՝ կիրառելու իր հայեցողությունը ծախսերի առաջնահերթությունների նկատմամբ: Սակայն դոտացիաներով ներկայացվող՝ ընդհանուր ռեսուրսների մասը զգալիորեն տարբերվում է երկրների միջև, և հատուկ ծրագրերի դոտացիաների

առավելական հարաբերակցությունը ավելի ընդհանուր դոտացիաների նկատմամբ կարող է խելամիտ համարվել, երբ դրանք ամբողջությամբ վերցրած ներկայացնում են ընդհանուր եկամուտի համեմատաբար ոչ նշանակալից մասը:

9-րդ հոդվածի 7-րդ կետի երկրորդ նախադասությունը ձգտում է երաշխավորել, որ հատուկ նպատակի դոտացիան չի խանգարի տեղական իշխանությանը՝ սեփական հայեցողությամբ գործելու իր իրավասությունների ոլորտում:

Կետ 8

Տեղական իշխանությունների համար կարևոր է, որ նրանք կապիտալ ներդրումների համար ֆինանսական փոխառությունից օգտվելու հնարավորություն ունենան: Այդպիսի ֆինանսների հնարավոր աղբյուրը, սակայն, անխուսափելիորեն կախված կլինի յուրաքանչյուր երկրի կապիտալի շուկայի կառուցվածքից. այդպիսի աղբյուրներից օգտվելու ընթացակարգն ու պայմանները կարող են սահմանվել օրենսդրությամբ:

Հոդված 10

Կետ 1

Այս կետը ընդգրկում է համագործակցությունը տեղական իշխանությունների միջև գործառական հիմքով, մասնավորապես, ավելի մեծ արդյունավետության հասնելու նպատակով՝ միացյալ ծրագրերի միջոցով կամ կատարելով առաջադրանքներ, որոնք դուրս են մեկ իշխանության կարողությունից: Այդպիսի

համագործակցությունը կարող է իշխանությունների դաշնություններ կամ միավորումներ կազմելու ձև ստանալ, այնուամենայնիվ, այդպիսի մարմինների ստեղծման օրինական հենքը կարող է սահմանվել օրենսդրությամբ:

Կետ 2

2-րդ կետն առնչվում է միավորումներին, որոնց նպատակներն ավելի ընդհանուր են, քան 1-ին կետի գործառնական նկատառումները, և որոնք սովորաբար ձգտում են բոլոր տեղական իշխանությունները ներկայացնել որպես մասնավոր ձև կամ ձևեր՝ տարածաշրջանային կամ ազգային հիմքի վրա: Այս տիպի միավորումներին պատկանելու իրավունքը սակայն չի ենթադրում կենտրոնական իշխանության կողմից որևէ անհատ միավորման ճանաչումը որպես օրինական գրուցակից:

Եվրոպայի խորհրդի այս տիպի փաստաթղթում բնականոն է, որ ազգային մակարդակով միավորումներին պատկանելու իրավունքը պետք է ուղեկցվի զուգահեռ իրավունքով՝ պատկանելու միջազգային միավորումներին, որոնցից մի քանիսը գործունյա են եվրոպական միասնությունը խթանելու գործում այն ուղեգծերով, որոնք համապատասխանում են Եվրոպայի խորհրդի օրենքում սահմանված նպատակներին:

Այդուհանդերձ 10.2 Հոդվածը անհատ անդամ երկրներին է թողնում օրինական կամ այլ միջոցների ընտրությունը, որոնցով սկզբունքը արդյունավետություն կստանա:

Կետ 3

Այլ երկրների անհատ տեղական իշխանությունների հետ ուղղակի համագործակցությունը նույնպես պետք է թույլատրել, թեև այդ համագործակցության ձևը պետք է հարգի այն իրավական կանոնները, ինչպիսիք կարող են լինել յուրաքանչյուր երկրում և տեղի ունենա խնդրո առարկա իշխանությունների իրավասությունների շրջանակում:

Տարածքային համայնքների կամ իշխանությունների միջև անդրսահմանային համագործակցության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայի (1980թ. մայիսի 21, ETS No 106) դրույթները առանձնապես էական են այս տեսակետից, թեև համագործակցության որոշ ձևեր չպետք է սահմանափակվեն սահմանային տարածքներով:

Յոթված 11

Իրավական միջոցներին դիմել ասելով պետք է հասկանալ տեղական իշխանության իրավունքը դիմելու՝

- ա. հատուկ կազմավորված դատարանին կամ
- բ. համարժեք, անկախ, օրինական մարմնի, որն իրավասություն ունի վճռել և համապատասխանաբար՝ վճռելու խորհուրդ տալ այն մասին, համապատասխանում է արդյոք օրենքին որևէ գործողություն, զանցառություն, որոշում կամ այլ վարչական ակտ:

Նշելի է մի օրինակ երկրներից մեկում, որտեղ թեև վարչական որոշումները դատարանին դիմելու համար սովորական նյութ չեն, կարելի է դիմել դատական քննության վերսկսման պահանջ կոչվող արտակարգ միջոցին:

Իրավական այս միջոցը, որը հասանելի է, եթե որոշումը հիմնված է օրենքի բացահայտ սխալ կիրառման վրա, համապատասխանում է այս հոդվածի պահանջներին:

Չորված 12

Խարտիայի 1-ին մասում սահմանված՝ տեղական ինքնակառավարման սկզբունքների ձևակերպումը պետք է փորձի հաշտեցնել Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում գոյություն ունեցող իրավական համակարգերի և կառավարման կառուցվածքների մեծ տարբերությունը: Այնուամենայնիվ, ճանաչվել է, որ անհատ կառավարությունները դեռևս կարող են բախվել Խարտիայի առանձին դրույթները ստորագրելու սահմանադրական կամ գործնական խոչընդոտների:

Այս հոդվածը համապատասխանաբար ընդունում է «պարտադիր միջուկի» համակարգը, որն առաջին անգամ հիմնադրվել է Եվրոպական սոցիալական խարտիայում, նախատեսելով, որ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կողմերից պահանջվի ստորագրել Խարտիայի I մասի երեսուն կետերից առնվազն քսանի տակ՝ ներառյալ միջուկի տասնչորս հիմնական սկզբունքներից առնվազն տասը: Այնուամենայնիվ, քանի որ վերջնական նպատակը մնում է համաձայնումը Խարտիայի բոլոր կետերին, կողմերին հատուկ իրավունք է տրվում ավելացնելու իրենց պարտավորությունները՝ ինչ ձևով և երբ այդ հնարավոր դառնա:

Չորված 13

Սկզբունքորեն Խարտիայի I մասում առաջադրված պահանջները վերաբերում են յուրաքանչյուր երկրի տեղական իշխանության բոլոր տեսակներին կամ մակար-

դակներին: Դրանք ներունակաբար վերաբերում են նաև տարածաշրջանային իշխանություններին, եթե դրանք կան: Սակայն որոշ տարածաշրջանների (մասնավորապես դաշնությունների անդամ պետությունների) հատուկ իրավական ձևը կամ սահմանադրական կարգավիճակը կարող է կանխադրել, որ դրանք կդառնան նույն պահանջների սուբյեկտը, ինչ որ տեղական իշխանությունները: Ավելին, մեկ կամ երկու անդամ երկրներում կա տեղական իշխանությունների մի տեսակ, որն իր փոքր չափերի պատճառով ունի միայն փոքր կամ խորհրդակցական գործառույթներ: Հաշվի առնելու համար այսպիսի բացառիկ դեպքերը՝ 13-րդ հոդվածը թույլատրում է խարտիայի շրջանակից բացառել իշխանությունների որոշ տեսակներ:

Յոդված 14

Այս հոդվածը նախատեսված է դյուրացնելու անհատ երկրների կողմից խարտիայի կիրառման վերահսկումը՝ վերջինների համար պարտավորություն սահմանելով համապատասխան տեղեկատվություն տալ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին: Հատկապես խարտիայի կիրառումը վերահսկելու համար պատասխանատու հատուկ մարմնի բացակայության դեպքում առանձնապես կարևոր է, որ Գլխավոր քարտուղարին մատչելի լինի տեղեկատվությունը օրենսդրության ամեն մի փոփոխության կամ այլ միջոցառումների վերաբերյալ, որոնք նշանակալից ազդեցություն կունենան տեղական ինքնավարության վրա, ինչպես այն սահմանված է խարտիայում:

Հոդվածներ 15-18

15-18-րդ հոդվածներում պարունակվող վերջնական դրույթները հիմնված են Եվրոպայի խորհրդում կնքված կոնվենցիաների և համաձայնագրերի վերջնական դրույթների օրինակի վրա:

Sales agents for publications of the Council of Europe Agents de vente des publications du Conseil de l'Europe

BELGIUM/BELGIQUE

La Librairie Européenne -
The European Bookshop
Rue de l'Orme, 1
BE-1040 BRUXELLES
Tel.: +32 (0)2 231 04 35
Fax: +32 (0)2 735 08 60
E-mail: info@libeurop.eu
http://www.libeurop.be

Jean De Lannoy/DL Services
Avenue du Roi 202 Koningslaan
BE-1190 BRUXELLES
Tel.: +32 (0)2 538 43 08
Fax: +32 (0)2 538 08 41
E-mail: jean.de.lannoy@dl-servi.com
http://www.jean-de-lannoy.be

BOSNIA AND HERZEGOVINA/ BOSNIE-HERZÉGOVINE

Robert's Plus d.o.o.
Marka Marulića 2/V
BA-71000 SARAJEVO
Tel.: +387 33 640 818
Fax: +387 33 640 818
E-mail: robertsplus@bih.net.ba

CANADA

Renouf Publishing Co. Ltd.
22-1010 Polytek Street
CDN-OTTAWA, ONT K1J 9J1
Tel.: +1 613 745 2665
Fax: +1 613 745 7660
Toll-Free Tel.: (866) 767-6766
E-mail: order.dept@renoufbooks.com
http://www.renoufbooks.com

CROATIA/CROATIE

Robert's Plus d.o.o.
Marasovičeva 67
HR-21000 SPLIT
Tel.: +385 21 315 800, 801, 802, 803
Fax: +385 21 315 804
E-mail: robertsplus@robertsplus.hr

CZECH REPUBLIC/RÉPUBLIQUE TCHÈQUE

Suweco CZ, s.r.o.
Klecakova 347
CZ-180 21 PRAHA 9
Tel.: +420 2 424 59 204
Fax: +420 2 848 21 646
E-mail: import@suweco.cz
http://www.suweco.cz

DENMARK/DANEMARK

GAD
Vimmelskaflet 32
DK-1161 KØBENHAVN K
Tel.: +45 77 66 60 00
Fax: +45 77 66 60 01
E-mail: reception@gad.dk
http://www.gad.dk

FINLAND/FINLANDE

Akateeminen Kirjakauppa
PO Box 128
Keskuskatu 1
FI-00100 HELSINKI
Tel.: +358 (0)9 121 4430
Fax: +358 (0)9 121 4242
E-mail: akatilaus@akateeminen.com
http://www.akateeminen.com

FRANCE

La Documentation française
DILA – Administration des ventes
23 rue d'Estrées
CS10733
FR-75345 PARIS cedex 07
Tel.: +33 (0)1 40 15 70 00
Fax: +33 (0)1 40 15 70 01
E-mail: commande@ladocumentationfrancaise.fr
http://www.ladocumentationfrancaise.fr

Librairie Kléber
1 rue des Francs-Bourgeois
FR-67000 STRASBOURG
Tel.: +33 (0)3 88 15 78 88
Fax: +33 (0)3 88 15 78 80
E-mail: librairie-kléber@coe.int
http://www.librairie-kléber.com

GERMANY/ALLEMAGNE

AUSTRIA/AUTRICHE
W. Bertelsmann Verlag GmbH & Co KG
Auf dem Esch 4
D-33619 BIELEFELD
Tel.: +49 521 91101 13
Fax: +49 521 91101 19
E-mail: uno-verlag@wbv.de
www.uno-verlag.de

GREECE/GRÈCE

Librairie Kauffmann s.a.
Stadiou 28
GR-105 64 ATHINA
Tel.: +30 210 32 55 321
Fax: +30 210 32 30 320
E-mail: ord@ototen.gr
http://www.kauffmann.gr

HUNGARY/HONGRIE

Euro Info Service
Pannónia u. 58.
PF. 1039
HU-1136 BUDAPEST
Tel.: +36 1 329 2170
Fax: +36 1 349 2053
E-mail: euroinfo@euroinfo.hu
http://www.euroinfo.hu

ITALY/ITALIE

Licosa SpA
Via Duca di Calabria, 1/1
IT-50125 FIRENZE
Tel.: +39 0556 483215
Fax: +39 0556 41257
E-mail: licosa@licosa.com
http://www.licosa.com

NORWAY/NORVÈGE

Akademika
Postboks 84 Blindern
NO-0314 OSLO
Tel.: +47 2 218 8100
Fax: +47 2 218 8103
E-mail: support@akademika.no
http://www.akademika.no

POLAND/POLOGNE

Ars Polona JSC
25 Obrocnow Street
PL-03-933 WARSZAWA
Tel.: +48 (0)22 509 86 00
Fax: +48 (0)22 509 86 10
E-mail: arspolona@arspolona.com.pl
http://www.arspolona.com.pl

PORTUGAL

Marka Lda
Rua dos Correiros 61-3
PT-1100-162 LISBOA
Tel.: 351 21 3224040
Fax: 351 21 3224044
Web: www.marka.pt
E-mail: apoio.clientes@marka.pt

RUSSIAN FEDERATION/ FÉDÉRATION DE RUSSIE

Ves Mir
17b, Butlerova ul. - Office 338
RU-117342 MOSCOW
Tel.: +7 495 739 0971
Fax: +7 495 739 0971
E-mail: orders@vesmirbooks.ru
http://www.vesmirbooks.ru

SPAIN/ESPAGNE

Diaz de Santos Barcelona
C/ Balmes, 417-419
ES-08022 BARCELONA
Tel.: +34 93 212 86 47
Fax: +34 93 211 49 91
E-mail: david@diazdesantos.es
http://www.diazdesantos.es

Diaz de Santos Madrid
C/Albasanz, 2
ES-28037 MADRID
Tel.: +34 91 743 48 90
Fax: +34 91 743 40 23
E-mail: jpinilla@diazdesantos.es
http://www.diazdesantos.es

SWITZERLAND/SUISSE

Planetis Sàrl
16 chemin des Pins
CH-1273 ARZIER
Tel.: +41 22 366 51 77
Fax: +41 22 366 51 78
E-mail: info@planetis.ch

UNITED KINGDOM/ROYAUME-UNI

The Stationery Office Ltd
PO Box 29
GB-NORWICH NR3 1GN
Tel.: +44 (0)870 600 5522
Fax: +44 (0)870 600 5533
E-mail: book.enquiries@tso.co.uk
http://www.tsohop.co.uk

UNITED STATES AND CANADA/ ÉTATS-UNIS ET CANADA

Manhattan Publishing Co
670 White Plains Road
USA-10583 SCARSDALE, NY
Tel.: +1 914 472 4650
Fax: +1 914 472 4316
E-mail: coe@manhattanpublishing.com
http://www.manhattanpublishing.com

Council of Europe Publishing/Éditions du Conseil de l'Europe
FR-67075 STRASBOURG Cedex

Tel.: +33 (0)3 88 41 25 81 – Fax: +33 (0)3 88 41 39 10 – E-mail: publishing@coe.int – Website: http://book.coe.int